

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Ն. Ա. Խ. Գ. Ի Ծ

ԳԱՅՆԱՀԱՄԱՐԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ ԱԶԴԱՅՑԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Կազմուց. Մատրեկու Լովիսկոպոս.

Ա. Էջմիածին. 1917 թ.

Հայ գրականութեան աղքատութիւնը պատճառ է եղել գրական գնահատութեան մի բաւական ցաւալի չափ ունենալու, որը որքան հիմքեր, նոյնքան էլ վտանգաւոր հետեանքներ ունի:

Այդ չափը մօտաւորապէս այս բանաձևն ունի «Որքան և առաջադրուած երկը խոշոր պակասութիւններ ունի», բայց որովհետեւ իւր տեսակում միակն է, զնահատելի է: Հեղինակին էլ իւր հերթին ստիպուած խօսիսաւանք է կարդացւում:

Այս թեք հարթութիւնն ներկայացնող դրութիւնը շատ գրողների սայթաբանն պատճառ է դառնում, այն տեսակէտից նախ, որ գրական գնահատութեան այդ վնասակար չափը շատերին հնարաւորութիւն է ընձեռում խնդիրն առանց լուրջ ուսումնասիրելու, գրածի համար պատասխանատութիւն զգալու, այս ու այն հարցը անմշակ հրասպարակ հանելու, երկրորդ՝ գրեթէ տմեն խնդրի ուարզարանութեան համար իրեն ձեռնահատ համարելու:

Եւ այժմ հայ գրական աշխարհում մասնագէտ աշխատաւորների թիւը աւելի քան աննշան է. գրա վոխարէն կան բաւականթիւ էժան հանրապէտներ, մի շարք ամեն զիտակարգի վերաբերող դրուածքներով:

Անմշակ, շուկացի պահանջ աշխատանքներով մեր գրական աշխարհը հարստացնողները ոչ միայն ընթերցողներին վարժեցնում են թեթև վերաբերուելու կեանքի, զիտութեան ծանրակշիռ հարցերին, այլ և մաքերի շփոթութեան առիթ են տալիս. վերջին հանգամանքը յատկապէս վտանգաւոր է, երբ զրոյք այս ու այն տեսակէտից որոշ դիրք ու հեղինակութիւն ունի, թէկուզ մինի աստիճանի. հետ կապուած:

Մանաւանդ այժմ, երբ համայն Ռուսաստանի ազգերի ինքնօրէնութեան նոր հիմքերով կազմակերպելու ծանր, պատասխանառու խնդիրներն են քննում ամենուր և ժողովներում և մամուլում, ընականաբար զգուշաւորութիւնը ու հեռատեսութիւնը նման խնդրով պարապողի համար հրամայական պահանջ պէտք է լինի:

Մթնոլորդը թէ քաղաքական ու թէ հասարակական տևակէտից անակնկալներով շատ է յղի, ընականաբար մեր խօսքն ու գրածը պէտք է այդ դրութեան կնիքն ունենան իրենց վրայ:

Այս նկատումներով պէտք է մօտենալ և վերոգրուած աշխատութեան, որը ժամանակից հրատապ կոչուող հարցերի մէջ մեզ համար կենսական նշանակութիւն ունի և որի անաշտ քննութիւնը անպայման անհրաժեշտ է անկախ այն հանգամանքից, որ հեղինակը, չգիտեմ ինչու, գրքի ճակատին սքննադատելի» խօսքն է դրել. քանի որ անգամ միապետութեան ժամանակ նոյնիսկ պետական կարգադրութիւնները քննադատուել են, ուր մնաց խօսքի ու խղճի այս ազատ ժամին մի անհատի զրուածք:

Առաջին հայեացքից տարօրինակն այն է, որ մի անհատ կազմում է պահանագրութիւն» համայն հայ եկեղեցու համար. սովորաբար այդպիսի աշխատանքները հաւաքական ոյժերի է յանձնում, անգամ երբ աշխատանքը ոչ պաշտօնական նշանակութիւն ոլիտի ունենայ. այն պարզ հասկացողութեամբ, որ կանոնը, օրէնքը կեանքի լրջմիա ուսումնասիրութեան արդիւնք է լինելու, սովորաբար մի անհատի, որքան և հանձարեղ լինի նա, ոյժից այդ վեր է լինում. ներկայ զէալքում այդ հաւաքական աշխատանքը չկայ, անհատի դործ է հրապարակ հանուած. ընդունենք, որ աղատութեան ժամին մեր ընդունած հաւաքական աշխատանքի սկզբունքն էլ վերացւում է և անձնական պատասխանատութիւնը միակ բացտղրութիւնն է մեալու այս աշխատանքի հրապարակ գալուն:

Այս դէպքում հեղինակից պէտք է պահանջնենք—
1. իրաւաբանական պատրաստութիւն ընդհանրապէս և յատկապէս հայ եկեղեցու իրաւունքի մօտիկ ծանօթութիւն. 2. Հայոց պատմութեան լաւատեղեակութիւն, 3. հայ գաւանաբանութեան ու աստուածաբանութեան հմտութիւն, 4 ամենուր ցրուած հայ ժողովրդի ներկայ մտաւոր-բարոյական կեանքի ծանօթութիւն, 5. այն պետութիւնների քաղաքական օլետական կազմակերպութեան, պետութեան ու եկեղեցու յարաևերութեան ծանօթութիւն ուր կայ հայ ժողովուրդ. 6. որոշ մշակուած աշխարհայեցք:

Սոյն պահանջներն անհրաժեշտ են այն պարզ պատճառով, որ հեղինակը իւր աշխատութեան մէջ հայ եկեղեցու, ժողովրդի

կըօնա-քարոյական, մտաւոր քաղաքական կեանքնէ Կորմերի տակ դնում, որոնք իր համոզմուքով պէտք է բնդունուին և պառան կենսական, մնայուն, մինչև նրանց փոխուելը, հետեւագէս մեր առանին, անձնական ու հասարակական կեանքի հարցերն են շօշափելու ամեն օր, մեր խոկ կաշու վրայ ենք զգալու այդ «կանոններ»-ի լու կամ վատ հետեանքը:

Պէտք է ընդունենք և այն, որ հեղինակը այդ պահանջներին գոնէ մօտաւորագէս պէտք է քաւարարէ-այլապէս նու հրապարակ չէր գոյ և պատասխանատութիւն յանձն չէր տոնի. Երբ զիրքը տպուած և իւր կողմից արտօնուած է գրաւոր, որ գքննադատելի է, բնական է, որ իւր զրածին պատասխանատու է ըստ ամենայնի: Ծիշեալ պահանջներն ի նկատի ունենալով էլ մօտենանք ինդրին:

Մանրմասն կարդացել, իմովսանն քննել եմ գքննադատելի կանոնադրութիւնը ու ամենից առաջ չեմ զտել մի կարեւոր հանդամանը, որն են այն աղքիւրները որոնցից օգտուել է հեղինակը իւր կանոնադրութիւնը կազմելիս Անպայման նու ձեռքի տակ պէտք է ունենար աղքիւրներ. որոնց հիման վրայ և կազմել է իւր աշխատանքը. այդ աղքիւրների յիշատակութիւնը չեւայ:

Կանոնները կորդալուց յետոյ երեսց, որ հեղինակը աշքի տուաջ է ունեցել 1836 թուի ալօլօժէնեան, տաճկահայ սահմանադրութիւնը, մեր ծխական կանոնադրութիւնը, թիմական խորհրդի կանոնադրութիւնը. պէտք էր կանոնադրութեան աղքիւրները յիշատակել այն պարզ պատճառով, որ ընթերցողը իմանար, թէ այս կամ այն կանոնը ինչ հիմք ունի. անձնական մտածողութեան ցանկութեան արդասիք է, թէ ունի իւր այս կամ այն հիմքը: Այլ է, երբ կազմողը իւր ցանկութիւնն է դնում հրապարակ, այլ է, երբ նա մատնանշում է, որ կանոնը այս ինչ կանոնադրքից, հրահանգից է:

Յարտնի է, որ հեղինակի «բիրկ օղակ» և «ամեն տեսակ սկզբունք, խեղտող անուանած» 1836 թ. ալօլօժէնիան խոկ իմրազրելու համար կազմուել է և հոգուց յառուել յանձնաժողով 1830 թ. յունուարի 8-ին. մշտել է հիմնական սկզբունքներ, որ եկեղեցին պետութեան մէջ իրաւական մարմին է, որ եկեղեցու օրէնքները պարզ լինեն և եկեղեցին քաղաքական գործերի մէջ շխառնուի, որ ոչ թէ անհատները, այլ մարմինները կառավարեն եկեղեցին, որ հազեւը գասի պատիւը բարձրացնելու համար դպրոցներ բացուին: Եւ այդ յանձնաժողովը ոչ միայն հայ եկեղեցու կանոններն է նկատի է ունեցել (թէ իւր քմահանոյքով պատաղել է, պիտական շահերին յարմարեցրել) այլ և մոտ 7—8 օտարադդի աղքիւրներ է ի նկատի ունեցել, նաև ուսաց պետութեան հայ ժողովրդի այս

ու այն մասի անունով տուած հրովարտակները, սկսած 1722 թուից — 1821 թ., թուի 18 հատու էլ չխօսենք Ազգ. սահմանադրութեան մտափն, որ առելի լայն չափով ազրիւրներից է քաղուած, կազմած։ Եականն այն է, որ ազրիւրները դնէր և ցոյց տար, որտեղից ինչ է վերցրել. որն է իւր Շյօրինածը, որը կանոնական, օրէնսդրական հիմք ունի։

Բացի այս, կանոնադրութեամբ զբաղուողը առաջ հիմնական սկզբունքները պէտք է պարզէր. թէ ինչ հիմքեր ունի իւր կանոնադրութիւններ կազմելիս, այդուղ էլ կերպոյ նախ հեղինակի հայեցքը և սխտեմը, որին նա ձգուում է, որը նրա կարծիքով ամենից լաւն է։

Այժմ ամենից կարեռը հէնց այս է. մեզանից այս ըոսէիս չեն պահանջում և մենք էլ կարիք չունինք զանազան մանրամասնութիւններ պարունակող, հրահանդի նիւթ եղող կանոնների. մենք պէտք է պարզենք մեր եկեղեցու աղղային-վարչական-քաղաքական կազմակերպութեան հիմքերը և այդ հիմնաւորինք մեր եկեղեցու կանոններով, սովորութիւններով, մեր պատմական անցեալով։

Յայտնի է, որ մեր եկեղեցու կեսնքի համար նշանակութիւնն ունեցել Եժ կանոնադրութիւններ՝ սուրբ հարց, առաքելոց, տեղական և տիեզերական ժողովների, որ մենք ունինք եկեղեցական կանոնադրեր, Առշակոց, Մխիթար Գոշ, պատմութիւններ ու տուեալներ այս ու այն հարցի։ Հայրապետի դիւանում կոնդակներ, պետական-եկեղեցական փոխ յարարերութիւններին վերաբերող գրադրութիւններ և այլն։ Այս ազրիւրները հիմք ծառայելով պէտք է սկզբունքներ մշակուեն, մինչև հնարաւոր կլինիկ վարչական կազմակերպութեան մօտենալ և կանոններ ու հրահանդներ մշակել։

Հեղինակի աշխատութեան մէջ այդ էական սկզբունքները բացատրւած չեն։ Միայն իւր ոմի քանի խօսք յառաջարանում ընդունում է պաշտօնեանների ընտրութիւնները ու խորհրդակցութեամբ գործ կատարելու սկզբունքները. սրանք բուն եկեղեցական սահմանադրութեան հիմքների որոշ մասերն են և ոչ ամրագծութիւն։ Էական սկզբունքները՝ եկեղեցու ինչ լինելու, ինչ յարարերութիւն ունենալը դէպի պետութիւնը, դէպի միւս եկեղեցիները չկան, այդ պատճառով կանոնադրութիւնը, բացի չհիմնաւորութիւնը, չունի և ամրողջութիւն և որոշ սխտեմ։

Բանի որ հիմնական սկզբունքները պարզուած չեն, պարզ չէ և հեղինակի աշխարհայեցքը և սխտեմը. թէ օրինակ նո եկեղեցու վարչական ինչ կազմակերպութեան է հետեւել՝ սահմանադրական, միապետական, հանրապետական, դէմոկրատ հան-

բապետական, թեմերի կենդրոնացման, թէ ապակենդրոնացման սիստեմին։ Այս վարչական կազմակերպութիւնների ձեռքը խոռն գործադրել է իւր կանոնադրութեան մէջ, ուստի և ստացուել է շփոթութիւն և հակասութիւն կանոնների, իրաւունքների։

Պարզ չէ և այն, թէ հայ եկեղեցին Բնչ իրաւական դրութիւն պէտք է ունենայ պետութեան մէջ և Բնչ դրութիւն ունի նա միւս երկրներում օր. Պարակաստան, Ամերիկա, Բոլղարիա, Դանիա և այլն։ Տաճկաստանի և Ռուսաստանի համար մենք պէտք է զեռ որոշենք մեր անելիքը, ի նկատի ունենալով ներկայ քաղաքական պայմանները։

Չպէտք է մոռանալ այն հանդամանքը, որ հայ եկեղեցին յանձին հայոց Կաթուղիկոսի իրաւական միակ ճանաչուած ներկայացուցիչն է նաև ժողովրդական խնդիրներում։ Հայ ժողովրդի ներկայացուցիչն է պետութիւնների առաջ։ Որքան էլ Ռուսաստանում հայ եկեղեցու դրութիւնը փոխուի, դեռ ևս օտար պետութիւնների աչքում միակ ճանաչուած իրաւական հիմնարկութիւններնական է, որ հայ եկեղեցու կանոնադրութեան մէջ այս կէտը ևս պէտք է տեղ բռնի և որ զլխաւորն է այս դրութիւնից բղխող հետևանքները եկեղեցու կազմութեան համար հիմնաւորուի, յատկապէս հայոց Հայրապետութեան համար կանոնների վերածուի։ Մինչև այժմ եղած տուեալներով, դէմքերով։

Այն գէսլքում երբ իրաւագէտ դրսի լրջմիտ աշխատողները հայոց Հայրապետութիւնը միջազգային իրաւատէր մարմին են ուղղում դարձնել, Հռովմի պապի իրաւունքներով միջազգային հարցերում և այն էլ ոչ յանիրաւի և քմահաճօրէն ի նկատի ունենալով ցրուած հայ ժողովրդի ամրաղջութեան համար միջազգային մարմինի կարևորութիւնը, մեր հեղինակը ոչ միայն միանգամայն այդ անտես է տոնում, այլ Հայոց Հայրապետութիւնը մի գործադիր մարմին, մի հեշտութեամբ փոփոխելի հաստատութիւն է դարձնում։ Պարզ է, թէ որքան խելացի քաղաքականութեան ու որքան նրբին իրաւագիտութեան տէր է հեղինակը։

Կանոնադրութիւն կազմող յայտնում է՝ «Նախարարէցը կազմելիս աշքի առաջ ենք ունեցել ոչ թէ ուստահայերին, այլ ամրաղջ հայութեան, ուր էլ նոքա կանուին» (7 Եր.) և այս իսկ ցոյց է տալիս, որ կազմողի համար եկեղեցու իրաւարանական դրութիւնը պարզ չէ։

Եկեղեցական իրաւարանական սովորական ձեռնարկներն անդամ ասում են, որ Եկեղեցական իրաւունքը ունի երկու կողմարտաքին՝ որը կարգադրում է Եկեղեցու առ պետութիւնն, պետութիւնները ու միւս կրօնական համայնքները յարարերութիւն-

Ները և ներքին.—Եկեղեցու ներքին կեանքը կանոնաբռուդ:

Հետևապէս եկեղեցու կանոնագրութիւն մշակելիս անպայման պէտք է ի նկատի առնել նաև եկեղեցական արտաքին իրաւունքը, ինչպէս այդ արևել է և պօլօժէննեաւում և Ազգ. սահմ. մէջ: Ըստինքեան հասկանալի է, որ հանրապետական Ամերիկայում ուր եկեղեցին պետութիւնից բաժանէ, միապետական-հին սահմանադրական Պարսկաստանում, ուր հայ եկեղեցու տռաջնորդը, հայոց կաթուղիկոսը բացի կրօնական ներկայացուցիչ է, միաւս սահմանադրական Անդիայում, ուր եկեղեցին ու պետութիւնը բաժան չեն. Եկեղեցին, տարրեր իրաւունքներ ու պարտականութիւններ, արտօնութիւններ է ու նենալու տարրերը կանոններով էլ ղեկավարելու է: Էլ չեմ խօսում տաճկական և ոռոսական պետութեան կազմակերպութիւնների մասին: Խոչպէս հաւարառը է ուրեմն այս որութեան մէջ, տամրող հայութեան՝ համար կանոնադրութիւն մշակել: Պարզ է, որ եթէ ազատ Շուռաստանում հայոց Հայրապետը քաղաքական ներկայացուցիչ կարող է չլինել: բայց նո Պարսկաստանում, Տաճկաստանում, անդամ Ամերիկայում հանաչում է այդպիսին: Հետևապէս նրա զիրքը, իրաւունքը այլ ձևով պէտք է պաշտոն, կանոնադրուի, քան արուել է:

Հեղինակի «ամրող» հայութեան՝ համար կանոնադրութիւն պատրաստելը ցոյց է տալիս եկեղեցական իրաւութեան, միջազգային իրաւունքի ու հայ եկեղեցու ուրոյն որութեան կամ անտեղեակութիւնը կամ յաւագոյն դէսլքում ցաւալի անուշադրութիւնը:

Եկեղեցական սահմանադրութեան մասին գրուածք ունի և Արսէն վ. Դյունեանց. ռնախաղիծ Հայաստանեաց Եկեղեցու Աահմանադրութեան (Ալէքսանդրապոլ 1906 թ.) վերնագրով: Դարձեալ յեղաշրջման ժամանակ լոյս տեսած և Հայրապետական Դիւնի 1906 թ. 2-ն յունուարի թ. 2 գրութեամբ թոյլտարուած, Հայրապետական Դիւնի թոյլտութիւնը արգելք չի եղել, որ հեղինակը իր մաքերն ազատ արտայայտէ: բայց կարգացեք Արսէն վ.-ի առաջարանը (5—10 եր.) և համեմատեցեք Մատթեոս եպիսկոպոսի աՄի քանի խօսք-քի (3—8 եր.) հետ և կոնհանէք, որքան համեստ է ու պատասխանատութիւն է զգում գրողը և ինչպէս և ժամանակի ողին և արտաքին պետութիւնների ու պատական պետութեան իրաւակարդն է հաշուի առնում: այլ և հրահանդի բաժին եղող յօդուածներից է խուսափում: Այլ բան է, որ նրա կանոնադրութեան կէտերից ոմանց հետ ևս համամիտ չենք և քննադրատելի ենք համարում: կարևորն այն է, որ գրողը և մեր եկեղեցու անցեալին է ի նկատի ունեցել և եկեղեցական կանոն-

ները և ժամանակի ողին ու պատասխանառութեան զգացումն է պահել մէջը. այս բաները Մատթէոս եպիսկոպոսի գրուածքում չեն երեսմ և պակասութիւններ են:

Աւշադրութեան առնենք և այն հանգամանքը, որ Արքէն վ.-ը իւր նախագիծը անուանել է «Հայաստանից եկեղեցու Սահմանագրութիւն», և ոչ «Ազգային-եկեղեցական Սահմանագրութիւն» ինչպէս Մատթէոս եպիսկոպոսը, յիրաւի մենք «Եկեղեցական» և ոչ «Ազգային» Սահմանագրութիւն ովհատի մշակենք հէնց իր իսկ ժողովրդի, եկեղեցու և ժողովրդասիրութեան տեսակետից. անշուշտ աւելի ճիշտը «Եկեղեցական» սահմանագրութիւնն է, և ոչ «ազգային եկեղեցական»-ը:

Մի այլ կարեւր հանգամանք. որ Արքէն վարդապետը իւր կազմած Սահմանագրութեան զլ. Ա. §§ 1—9-ում հայ եկեղեցու իրաւական-ծիսական-դաւանարանական հիմքերն է որոշում, ուրիշ խօսքով եկեղեցու իրեն մարմինի պետութեան մէջ ունեցած դերն է պարզում, իսկ Մատթէոս եպիսկոպոսի կազմածում այդ կէտերը չկան. Մատթէոս եպիսկոպոսի սահմանադիր եկեղեցու հիմքերը չկան, վերնաշէնքը կայ. այն էլ թերի: Անհիմ շէնքը մեր ժամանակում և առաջներում էլ գոյութիւն չի կարող ունենալ. գուցէ թէ ապագայում հրաշքների տշխարհ սկսուի և շէնքը առանց հիմքի էլ գոյութիւն ունենայ (!). ընդհանրապէս առաջարկում ենք երկու կազմողների գրուածքները համեմատել. համեմատութիւնը ցոյց կտայ, որ յիրաւի Արքէն վարդապետի կազմածը ունի իրաւարանական ստեղծական. աւելի շուտ կանոններ, քան հրահանգներ է պարունակում, որ եկեղեցու էական կողմերը ընդգրկում է, մինչդեռ Մատթէոս եպիսկոպոսի կազմածում այս չկայ:

Անշուշտ Մատթէոս եպիսկոպոսին ծանօթ էր այդ նախագիծը. ինչու 1906 թուին կողմաւած, համեմատարար քիչ թերութիւններ ունեցող այս սահմանագրութիւնը աւշադրութեան չի տեսլ, պարզ չէ. իսկ եթէ անծանօթ է եղել իրեն, այդ էլ ներելի չէ. նա պարտաւոր էր իւր աշխատանքի համար շատ աղքիւրներ ունենալ.

Հայ եկեղեցու պատմական անցեալի ու ներկայ գոյութեան անուշաղիր լինելու, եկեղեցական կազմակերպութեան էութիւնը շուստմնասիրելու հետեւանք է նաև այն, որ կանոնագրութիւն կազմողը իւր սահմանագրութեան մէջ բոլորովին աւշադրութեան չի տեսի. Սաի կաթուղիկոսութիւնը, Աղթամարինը, Գոլոսի, Երուսաղէմի պատրիարքութիւնները, վանքերը իրենց միաբանութիւններով լիմ, Կառաց, Անան անապատները, կուսանոցները, հաստատութիւններ, որոնք աղղային իրաւական-կրօնական, ոմանք խիստ

մեծ, ոմանք աւելի քիչ նշանակութիւն ունին, որոնց ժողովարարութիւնները գէպի Մայրավանք և Էջմիածինը, գէպի միմեանց կարեոր են, բայց որոնց մասին և ոչ մի կանոն, անզամ ակնարկ չկայ: Պարզ է, որ հեղինակի կազմած սահմանադրութիւնը այս տեսակէտից շատ կիսատ է, պակասառ և ամեններն հայ եկեղեցու ստհմանադրութեան վերնազրին չհամապատասխանող:

Եկեղեցու վարչական կազմակերպութեան աղբիւրներին անանուշադիր թողնելու հետեւանք է, որ հեղինակը բոլորովին բարձի թողի է արել Մաշտոցը որը եկեղեցու իրաւունքի մէջ խռչոր տեղ ունի: Յիշենք, որ եօթն խորհուրդների և յատկապէս շնորհարաշխութեան միջոցով եկեղեցու անդամները և հոգեոր պաշտօնեանները ստանում են որոշնուրիրապետական կամ հասարակական իրաւունքներ. սկսած ա—թ. աստիճանը տարրեր իրաւունքներ է ստանում, ձեռնադրութեամբ թէ ամենայն հայոց Կաթողիկոսը իւր երդումով, թէ եպիսկոպոսները, թէ ծոյրապոյն և մասնաւոր վարդապետները, թէ քահանաներ, թէ միւս պաշտօնեանները. իրաւունց տէր են դառնում. կազմողը կանոնների մէջ պէտք է այս կէտնի նկատի ունենար և ըստ այնմ կանոնը խմբագրէր: Երբ օր. Հայոց Կաթողիկոսին ձեռնադրութեան ժամանակ իրաւունք են տալիս. (անս Մաշտոց. կաթ. ձեսն.) իսկ կանոնադրութեան մէջ այդ իրաւունքը խախտում է բնականարար հակասութիւն է ստեղծում, նոյնը և եպիսկոպոսի, վարդապետի նկատմամբ *): Չի կարելի մի բան, որ կայ, մշակւած է, ընդունած ու սրբազործւած, խառնել ու հակառակ կանոն տեղը դնել: պէտք է կամ տել, որ այս կանոնները կազմողը չի ընդունում, մերժում է այս, այս հիմնաւոր պատճառներով կամ որ ազգային ժողովին է վերապահում ուրանց քննութիւնը, վերամշակումը: Այլապէս եթէ եկեղեցական իրաւունքի մի աղբիւր, որ զետ դործադրւում է շրնդունեսու դրան հակառակ կանոններ գրես, դուրս կդայ երկիշխանական ու հակասական դրութիւն. դուրս է գալիս որ մի կողմից եկեղեցին իրաւունքներ է տալիս իր պաշտօնեաններին, միւս կողմից մի այլ կանոնադրութեամբ մերժում է. երկու կանոնադրութիւն իրար հակառակ նոյն խնդրի մասին միաժամանակ չեն կարող լինել:

Մաշտոցը իւր զաւոնարանական աստուածաբանական մասն ունի, սրա աղբիւրն էլ Ա. Գիրքն է, Աւետարանը, առաքելոց թըդիքը: Աստուածաբանական—զաւոնարանական տուեալներին հեղինակը պէտք է լաւ ծանօթ լինէր և մանաւանդ ուշադրութեան

*) Սոյն ինւզրի մասրամասնութիւնները տես Արշ. Տ. Միքայէլիան Հայոց Առաքելական ս. եկեղեցին եւ Նրա սուրբ կարզը. (1897 թ. Վաղարշապտաւ:

տոնէր, որ եկեղեցու ամբողջութեան համար կանոնադրութիւն մշակելիս ամբողջ կառուցուածքը ձեղքեր, կիսատ պոտատութիւններ չունենար. որ շենքը լինէր որոշ սիստեմի ճարտարապետութեան տակ: Իսկ ներկայ գէպքում կազմողի շինածը ոչ միայն պակասներ ունի, այլ և մի տեղ նա կիրթ ճարտարապետութեան նմոյշ ունի, մի ուրիշ տեղ բոլորովին հակառակ:

Ամփոփելով այս ընդհանուր նկատողութիւնները տեսնում ենք, որ կանոնադրութիւնը — հիմնառուած չէ, որովհետեւ հայ եկեղեցու կանոնադրութիւնները չկան յիշտակւած ու գործադրւած. կիսատէ, սիստեմ չունի սկզբունքները պարզուած չեն. իրաւարանական տեսակէտից անընդունելի է, որովհետեւ հրահանոց, կանոն, օրէնք իրարից չի տարբերել ու ոտար պետութիւնների պետական հիմնական օրէնքները ի նկատի չի տեղ:

Այս բոլոր թերութիւնները կանոնադրութիւնը դարձնում են անարժէք. ցոյց են տալիս, որ նո վաղաժամ, շուկայի պահանջնունդ է և չի կարող ուղեցնոյց լինել այդ խնդրով լրջօրէն պարագով ոչ անհատի և ոչ յանձնաժողովների համար: Մեր տաճները լուսարաններու համար այժմ ըերենք օրինակներ:

Տ 1. ըստ էութեան գլխովին սխալ է. աղջի զազակամբը տալ այդքան թերի ու ձիշտ, որ նեղսիրտ ձեռվ. աւելի քան տարօրիթինակ է այն հեղինակի զրչի տակ, որը զեմոկրատիկ եկեղեցու (5 եր.) սահմանադրութիւն է դրում, որը ամեն ինչ ընտրական սկզբունքի տակ է դնում ու ժամանակաւոր դարձնում և միաժամանակ հայոց աղջի զազակամբը կապում է զաւանարանութեան հետ: Չի յիշեցնում այս արդեօք միջնադարի զաւանարանական վէճները և 40—60—ական թուականների արտաքոյ էռուառը կանաչական եկեղեցու չիք հայութեան սկզբունքը: Միթէ հայ կաթոլիկը, բողոքականը հայ աղջի անդամ չէ: Այս խոշոր հիմնական կէտր հէնց առաջին հերթին սխալ է և իրաւարանական և պատմական տեսակէտից, յօդուածներ 2, 3, 6, 9, 10, 24 դ. 25, 26 իր իշտերով. 29, 38, 43, 46, 59, 66, 70, 75, 81, 95. քիչ տարրերութիւններով փոխ են առնուած Աղջային Սահմանադրութիւնից. Տես ՏՏ Բ. Գ. Դ. 2, 4—6, 8, 24, 28, 54—50, 61—3, 65. մի սահմանադրութիւն, որը կաղմուած է որոշ տեղի հայութեան համար և այն էլ միապետական տաճկաստանում, որ հայ պատրիարքը քաղաքական ներկայացուցիչ է ձանուշուած (Պ. Ա. յ. 1):

Շատ ընական է. թէ ինչու այն երկրում եկեղեցական սահմանադրութիւնը նաև ազգային սահմանադրութիւն է. ազգային շատ խնդիրներ — քաղաքական բնոյթ ունեցող. քաղաքական սահմանադրութիւնը են յանձնուած: Բնական է, որ այդօրինակ սահ-

մանադրութեան մէջ էլ ազդի, ազդի անդամի զաղափարի որոշումը կարևոր լինէր:

Այլ է մեր ընդհանուրական եկեղեցու վիճակը, որը ազգային սահմանադրութեան մէջ միայն իր որոշ տեղն ունի և ոչ թէ ազդային սահմանադրութիւնն է կազմում։ Եկեղեցին կրօնական-բարոյական իրաւաբանական մի հիմնարկութիւն է իւր ուրոյն ազգային բնոյթով։ Ուստի և իմ կարծիքով միանդամայն սխալ է տաճկահայ ազգային սահմանադրութեան հիմնական կէտերը մեր եկեղեցու սահմանադրութեան մէջ առնելը, փոխելով միայն սաճկական միապետութեան վերահսկողութեան վերաբերող մասերը։

Տաճկահայոց Ազգային սահմանադրութեան վրայ ընդհանուր հայ եկեղեցու սահմանադրութիւն գծելը այն սխալ հետեանքներին է քերել կազմողին որ Ամ. Հայոց Կաթուղիկոսին Պօլսոյ պատրիարքի հետ է համեմատել և համապատասխան կանոններ սահմանել նրա համար ևս. օր. § 24, գ. կէտով Կաթուղիկոսը ամրաստանութեան տակ է ընկնում և այլն. նոյն կէտը կայ Ասհմ. 1 գլ. § 5—6։

Բացի այն քաղաքական սխալը, որ անում է այսպիսով հեղինակը և իրագործում հէնց այն, որին իւր իսկ բողոքած Ատալիսինեան ուժիմն էր ձգտում դարձնել հայոց կաթուղիկոսին մի չինովնիկ. որին ըստ քմաց հնար կլինի փոխել. բացի այն, որ ցմահ ընտրուող կաթուղիկոսի համար նման կանոնը հակասութիւն է այլ և կազմողը մտանում է, որ եկեղեցական իրաւաբանութեան տեսակէտից պատրիարքը և Կաթուղիկոսը հաւասարազօր դրութիւնների պաշտօնեաներ չեն, որ շնորհաբաշխութեան տեսակէտից մէկը միւսից բարձր է և այլ արտօնութիւններ, լիազօրութիւններ է ստանում, որպիսի հանդամանքը չի կարելի մոռացութեան տալ, հակառակ դէպքում Մաշտոցի արարողութիւնը, Մաշտոցը ինքը ոլէտք է սրբագրել ու փոխել միանդամայն չշմարիտ է, պատմութեան մէջ պատահել է դէպք կաթուղիկոսի հեռացման սակայն պատմական եղակի դէպքը չի կարող կանոն դառնալ, այն էլ մի կանոնադրութեան մէջ մտցնել։ Հայ ժողովուրդն իւր ամբողջութեամբ հանգէս է դալիս, երբ հայոց կաթուղիկոսը այս ու այն, աղքութեան իրաւանց ջաղագով ոլէտք է դառնայ իւր խօսքն ասէ. նման խնդիրներ մեր մօտիկ անցեալում երեան են եկել կարուածների դրաման, զպրոցների ուսուցիչների բարեյուսութեան դէպքերը։

Եթէ նման, համեմատաբար փոքր, խնդիրներում ազդի հանրութիւնը երեան է պալիս, ընական է որ աւելի խոշոր դէպքերում, որպիսին կաթուղիկոսի հրաժարեցնելու դէպքն է, անշուշտ աղողը իր կարծիքը լսելի կղարձնէ ընդունուած ձևով։ Կարիք չկայ

օրէնք սահմանելու ճիշտ այնպէս, ինչպէս պետական արտակարգ խնդրի համար, օրինակ յեղափոխութիւն, ժողովրդական յուզում օրէնքով չի սահմանում:

Այլ բան է դէպքը և իրաւական դրութիւնը որոշելը, այլ է կանոն սահմանելը, Քաղաքական հեռաւեսութիւնը և զգուշաւորութիւնը կարևոր էր այս դէպքում: Մի քաղաքական իմաստութիւն, որը մեր ժողովուրդն իւր պատմական անցեալում մշտկել է և որը քաղաքական հողերանական հիմք ունի, որն այժմ աւելի ևս պէտք է ուշադրութեան առնուէր, մանաւանդ որ խնդիրը յարուցանողը եկեղեցու իշխան համարւող է, և պիսկովոս, որը մեր կեսանքի անցեալին ու էռթեանը լու պէտք է ծանօթ լինէր: Նոյնպիսի սխալ է թոյլ տուել և իւր չ-Ճ-որը Ազգ. Սահմ. 1 գ. § 32-ն է: Ամենից առաջ այս կէտն աւելորդ է: ամեն պաշտօնեայ իրաւատէր է ըստ էռթեան հրաժարուելու իւր պաշտօնից, սակայն տարրերութիւնն այստեղ այն է, որ պաշտօնն ու կոչումը իրարոց պիսի տարերել: Պատմութեան մէջ երկու դէպք կայ յիշուած՝ Լուսառորչի և Եփրեմ Կաթուղիկոսների հրաժարումն. այն էլ անձնական տկարութեան պատճառով և հայ եկեղեցու կանոնը բողոքում է զրադէմ. (տես Ն. Մելիք-Թանգ. Հ. եկեղեցական իրաւունքը Ա. հ. 125 եր. Ժա. կանոն): Պատմութեան ծանր բողէին, եկեղեցու հզնաժամին երբ կաթուղիկոսը հրաժարուի, չկորողանայ դիմադրաւել դժուարութիւններին ու եկեղեցին լքէ, արդեօք նա իրամբ է. չէ որ նա պարտաւոր է իւր ստանձնածը կատարել իւղանվու հաստատամութեամբ: Տեսում ենք, որ հայ եկեղեցու սահմանադրութիւնն զրոյը ընդհանուրապէս խնդիրներին շատ հարեւնցի է նայել ու հաւատանք, որ ակամայից հայ եկեղեցուն իշխաս կանոններ կազմել:

Հենց այս հիմնական կէտերի սխալ ըմբռնումը ցոյց է տալիս, որ կազմողը անուշադիր է թողել և եկեղեցական իրաւարանութիւնը, ուստի և գուրս է եկել մի տաճկահայ Սահմանադրութիւն իւր հիմնական մոսերում մի քանի վույնխութիւններով: Այդ սխալ հիմքի հետևանք է և այն, որ § 7-ում նա Ամենայն Հայոց Հայրապետին համարում է Ազգ. ժողովի գործադիր մարմին, ինչպէս այդ կայ Սահմանադրութեան Ա. դլ. § 1-ում ուր պատրիարքն է գործադիր մարմին:

Սխալ հիմքը սխալ եզրակացութիւնների է տարել: Տանկահայ Սահմանադրութիւնը եկեղեցական տնսակետից վերաբերում է կ. Պօլսի պատրիարքին, իսկ հայ եկեղեցու Սահմանադրութիւնը Ամ. Հայոց Կաթուղիկոսին. շատ պարզ պիտի լինի կազմողի համար, որ հայոց Կաթուղիկոսը իւր կանոնական-շնորհարաշխական իրաւունքով բարձր է պատրիարքից և ողջ հայ եկեղեցու նկրկա-

յացուցիչն է. Հետևաղէս նոյնանման օրէնքների տակ դնել երկու տարրեր իրաւարանական-կրօնական մարմինները հիմուվին սխալ է: Այդ միևնույն կլինէր եթէ մի եպիսկոպոսի ու մի քահանայի նոյն իրաւունքները տրուէր. եկեղեցու համար սահմանադրութիւն կազմողը սխալ հիմք ընդունելով՝ այն է ազգը և ոչ եկեղեցին հիմք դարձնելով իւր սահմանադրութեան սխալ էլ ֆունկցիաներ է տալիս պաշտօնեաններին. այլ է ազգային խնդիրը, ուր ճիշտ է որ պաշտօնեան պատասխանառու է և դործադիր, այլ է Եկեղեցին ուր շնորհաբաշխութիւնը կայ և զուտ սուրեկտիւ եկեղեցական իրաւարանական հիմքը և պաշտօնեան շնորհի միջոցով իրաւատէր է և օրէնտղիր և ոչ դործադիր: (տես Արշ. Տ. Միք. Կաթ. Ամ. Հայոց 34—116 եր.). Այդ սխալ հիմքին հետևելով է, որ Եկեղեցական սահմանադրութեան կանոններ զրոյք իւր հիմնական կանոններում (9—10 լ. և այլ ոչ մի խօսք չունի հայ Եկեղեցու իրաւական դրութեան մասին դրած. թէ հայ Եկեղեցին ինչ է, ինչ մարմին է, ինչ պարտաւորութեաններով ու իրաւունքներով: Կոիլովի հետաքրքրի առավին է յիշում մարդ հիմնական կանոնները կարդալիս. քարեկարգչի, ծիսական խորհրդի, անգամ սրանց դիւանների մասին յօդուածներ են դրուած ու այդ ամենը իր մէջ բովանդակող, այդ ամենի հիմք կազմող Եկեղեցու մասին ոչ մի խօսք չկայ: Ահա թէ ինչ կնշանակէ Եկեղեցական իրաւունքին, պետական օրէնսդրութեան լաւագույն չլինել ու սահմանադրութիւն կազմել:

Աշխարհայեացքի անորոշութեան, սխտեմ չունենալու հետեանք է և այն որ § 10-րդ ասում է նույ. Գեր. Ժողովի անդամ են Եկեղեցու բոլոր եպիսկոպոսները, թեմակալները, փոխանորդները անդամ են ձայնի իրաւունքով: Նոխ զեմովրատիկ ամեն պաշտօն ընտրական սկզբունք տուող կազմողը ինչ հիման վրայ Եկեղեցական ամենաբարձր տաեանի համար նշանակովի անդամներ է թոյլատրում. ևթէ ընտրութիւնն սկզբունքը այդ էլ պէտք է գործադրուի հէց ուխից. ևթէ ոչ, բայց ընտրովի և նշանակովի պաշտօնակարեր լինեն միաժամանակ: Աս սխտեմի քացակացութիւն է: Երերորդ՝ կազմողի տուած հաշուով ընտրելի հաղիւզոնէ 50 տարուայ ընթացքում 2 միլիոն հայ լինի: (40 տ. վեր միայն) կստանանք 100 պատգամաւոր. Ենթադրենք բոլորն էլ աշխարհական եղան, իր կանոնով, բոլոր եպիսկոպոսները, առաջնորդները, փոխանորդները իրաւունք ունին մասնակցելու. միայն Ռուսաստանում իր բաժանած նոր թեմերի, փոխանորդութիւնների հաշուով 23 հոգի հոգեուրական պիտի լինի, անպաշտօն էլ Ենթադրենք մի 10 հոգի ահա 33 հոգի, հապա Տաճկահայտանից, Պարսկահայտանից, Երոպայից, Հնդկաստանից, Ամերիկայից,

ուր կան առաջնորդներ և փոխանորդներ. և անողաշտօն եպիսկոպոսներ, առնուազն մի Յ անգամ էլ աւելի այնտեղերում կլինի, դուրս է դավիս որ ազգային եկեղեցական ժողովում կիսից աւելին նշանակովի մարդիկ են լինելու, և սա «ընտրական» դեմոկրատի սկզբունք տուող կազմողի կանոնն է. Հակասութիւնը պարզ է ինչպէս և հեղինակի անհետեղականութիւնը և անսիստեմ լինելը. Բէ որքան անհետեղական է իւր աշխատութեան մէջ հեղինակը երեսում է նրանից որ § 12 յօդուածի տակ գրել է երկու ծանօթիւթիւն ա. և բ. մէկը միւսին ջրող. հակասող. ա. ծանօթութեամբ գրողը աշխատում է հնարաւորութիւն ստեղծել, որ տեղական աշխատաւոր ժողովուրողը հնարաւորութիւն ունենայ լայն չափով մասնակցելու ընտրութեան» իսկ բ. ծանօթութեամբ ասում է «ընտրութիւնը կայանում է ինչքան ներկայացուցիչ էլ Եկած լինին». Պարզ չէ, որ լայն չափով մասնակցութեան հրաւիրելու համար հարկաւոր է թոյլ տալ, որ բ. գ. ժողովը լինի, որ ա. ժողովին հնարաւորութիւն չունեցողը գոնէ բ.ի գ-ին զայ ճշմարիտ է իրականութեան մէջ այլ օրինակներ ենք տեսնում և բերուծա օրինակն էլ մանր բան է, բայց կարեւը սկզբունք ունենայն է և սկզբունքին հաւատարիմ մնալը, մի բան, որ կազմողը ոչ էական և ոչ անդամ երկրորդական խնդիրներում չի ցոյց տալիս որով և աշխատանքն է նսեմանում:

Դործնական տեսակէտից նպատակին չի ծառայում Գեր. Խորհուրդը. որովհետեւ սրա անդամները ոլէտք է լինին միայն ուռուահայեր. քանի որ Էջմիածնում զանուող ու պաշտօն վարող խորհրդի անդամ չի կարող լինել Ամերիկայում, Տաճկաստանում, Պարսկաստանում բնակուող պատղամաւորը. Հեղինակը ոլէտք է խորհրդի այնպիսի ձև մշակէր, որ դրսի հայութիւնն էլ իր անմիջական ձայնը իր պատղամաւորի միջոցով Գեր. Խորհրդում լսելի դարձնէր, Այդ ձևերից է օրինակ սոճկով պաշտօնեայ լինելը. պէտք է սցիս, ուժիք էնդումը: Գեր. Խորհուրդը կարեւը մարմին է և դրսի հայութեանը հնարաւորութիւն ունի իր տնմիջական ներկայացուցիչը ունենալու այնուհետ:

Իրաւարանական պատրաստութեան պակասութեան հետեւոք է այն, որ գրողը կանոն և հրահանգ իրարից չի տարրերել, ուստի կանոնադրութեան 5/4-ը հրահանդի վերաբերող յօդուածներ են, հաղիւ 1/3-ը կանոններ են: Հրահանգը կանոնի զործադրութեան եղանակը ցոյց տուող է և հիմնական եկեղեցական կանոնադրութեան մէջ տեղ չպիտի ունենայ. այդպէս են § § 14, 15, 17—25, 34—41, յատկապէս ահանել § 23, § 36-ը իւր կէտերով և այլն. ընդունելով այդ յօդուածները ոչ էական, թէն շատ դէպքերում սուարկելի, ուշադրութեան չեմ տեսում:

Անփութիւթեան հետեանք է այն, որ § 25. ը. կէտում գեր. ժողովին վերապահում էք թեմ. և կենդր. խորհուրդների ել և մտից հաշիւների և նախահաշիւների քննութիւն և հաստատութիւնը. պէտք է աւելացնէք երկամեայ հաշիւները, ինչպէս այդ տրամադրում է 96. ժը. կէտը. և հանէք «նախահաշիւ» և «հաստատում է» բառերը. որովհետեւ երկու տարին մի անգամ զումարող ժողովը չի կարող նախահաշիւ հաստատել մի հաստատութեան որ տարեկան հաշիւներով է գործում և ոչ էլ հաստատել մի հաշիւ, որը արդէն գործադրուել է վերջացել. նա կարող է քննել ու թերութիւններ դունել, պատասխանառութեան հրաւիրել և ոչ հաստատել: Յօդուածները դրելիս պէտք է լաւ յիշեր, թէ որ մարմնին ինչ իրաւունք է տուած, որ այսպիսի հակասութիւնների մէջ չընկնէր:

Գործնական, իրական կեանքից կտրուած պէտք է լինէր հեղինակը, որ § 25. ժր-րդ կէտը զնէր. երբ ամենուր քահանայութեան պատիւը բարձրացնելու, նրան դանձանակահաւաքութեան անյարմար դրութիւնից հանելու համար մտածում են ոռնիկ սահմանել. հեղինակը զեռ տուրքերի սխոտենի. է պահում իրականութիւնը այլ բան է թելադրում և կանոններ կազմողը պարտաւոր է այդ ի նկատի ունենալ, եւրոպական երկրներում ճշմարիտ է գանձանակ շրջեցնում են եկեղեցում, բայց այդ լինում է յօդուած համայնքի և ոչ պաշտօնէի:

Միթէ զեմօկրատիկ ոգու համապատասխան է § 32-ը. որը պահանջում է հայոց կաթ. ընտրելու համար 10 տ. եպ. լինել և 40 տարեկան. միթէ հայ եկեղեցու ժնազարաւոր տարիների հնութիւնը (6 եր.) ունի այդ կանոնը. սա բիւրօկրատիկ մտածողութեան հետեանք է անպատճառ եպիսկոպոսներից ընտրել, 40 տարեկան եղողից և այն էլ 10 տ. եպիսկոպոս եղած լինի. սա մի եռակի ցենդ է, որը գուցէ յարմար լինի միտպ. Ռուսաստանի կայսերական խորհրդի նշանակովի անդամի համար և ոչ հայ եկեղեցու: Տեսնում ենք, որ կազմողը հետեղական չէ եղել իր կանոններում. այն պարզ պատճառով, որ ոչ սկզբունքներն է պարզ և ոչ սխոտեմը. որին հետեւում է: Նոյնքան ու էլ աւելի բիւրօկրատիկ ոգու ծնունդ է § 36, դ. կէտը իւր աննման ծանօթութեամբ, որով խօսքի աղատութեան ժամանակ կաթ. ընտրութեան ծանր հարցի առթիւ մարդկանց բերանն է վակում: Եւ ոչ մի սահմանադրութեան մէջ այսօրինակ զգեմօկրատիկ սկզբունք չկայ, և կազմողը մի կողմից հայոց կաթուղիկոսին քննազատելի, զատի տակ ընկնող է դարձնում. միւս կողմից ընտրելու ժամանակ արգելում է խնդրի մասին կարծիք յայտնել, խօսել, խնդիրը պարզաբանել: Ահա թէ ինչու տուած էի, որ սխոտեմ չկայ, սկզբունքներ չկան

ողարգ դրուած. այլ այս ու այն կանոններից սննյածող քաղուածները են չփոթ դրութեամբ ու հակասութիւններով:

Պատմական աւանդութիւններին միանգամայն հակառակ է, նմանապէս § 41-ը որով կաթուղիկոսի տիտղոսն է որոշվում. նախ առաջելական եկեղեցու խօսքն է մոռացած, որը յայտնի է, թէ ինչքան մէծ պայքարի, վէճերի առիթ է Եղել յատկապէս Հռովմի եկեղեցու հետ. երկրորդ Մայր Աթոռի անուանն է թողնուած. քանի որ պատմականօրէն Լուսաւորչի զանը Մայր Աթոռում է հաստատուած անհրաժեշտ է տեղի անունը տիտղոսում յիշել, պատահականութեան ու քմահաճոյքի խնդիր չէ տեղը. այլ պատմական մեծ աւանդի, որից իրաւունք չունինք երբէք հրաժարուելու. կազմողը շատ թիթե է վերաբերուել խնդրին, միւս կողմից պատմութեանը, խնդրի իրաւական կողմը անուշադրութեան է մատնել:

Ըստրական սկզբունքը հիմք ընդունող գրողը զարմանաւորէն § 36. թ. կէտում նոյն քուէարկութեան տակ է դնում երկու միանգամայն տարրեր պաշտօնեանների ընտրութիւն. ըստ այդ յօդուածի առաւել քուէ ստացող թեկնածուն կաթուղիկոս է, իսկ որանից պակաս քուէ ստացողը տեղակալ. Պարզ պիտի լինէր կանոնադրութիւն կազմողի համար, որ տեղակալն ու կաթուղիկոսը միանգամայն տարրեր ֆունկցիաներ ունեն, տարրեր պաշտօններ են. (ի դէպս ասենք, որ տեղակալի մասին առանձին յօդուածներ չկայ, մինչդեռ կաթուղիկոսից յետոյ հայ եկեղեցու իրաւական ներկայացուցիչն է. մի այլ օրինակ, որքան ինքը ու հաղճէպ է կազմուած կանոնադրութիւնը):

Շատ հասկանալի է, որ ժողովականները կարող են բոլորովին տարրեր խմբաւորումներ ունենալ կաթուղիկոսի և տեղակալի անձնաւորութիւնների շուրջը և բոնագաղել, որ կաթուղիկոսի թեկնածուն տեղապահ լինի սիալ է և հակասահմանադրական. ոչ մի տեղ նախադահի հետ նախադահի օկնականը չի քուէարկուում, այլ տարրեր քուիարկութիւններ են լինում. ուր մնաց որ տեղապահն ու կաթուղիկոսը միասին քուէարկուին:

Կանոնի շփոթութեան. հակասութեան ցայտուն օրինակ է և § 31-ը, § 44-ի ը. կէտը և 48-ը. § 31-ով կաթուղիկոսը վերահսկող ու ղեկավարողն է եկեղեցական աղքային համայն գործերի, 44. ը. կէտով կանոնների և Դեր. ժողովի որոշումների մութ պարզանող կէտերը մօտաւորապէս Սենատի ղեր է կատարում § 48-ով էլ Գերազոյն խորհուրդն է վերահսկում ու ղեկավարում. որանցից հիմա նրն է ղեկավարողը և վերահսկողը. Արդեօք մութ կէտեր բացադրելը, (բազմաւութեան)՝ ղեկավարել, վերահսկելու մէջ չի մտնում, եթէ մտնում է ապա այդ խնդրի ղեկավարութիւնը

ժրինն է և որ սահմանում, ոչ միայն հակասութիւնն է պարզ, այլ և կանոնը անորոշ է կաղմուած:

Նոյնպէս անորոշ է և § 44-ի դ. կէտը. ինչ կնշանակէ ժողովրդեան միջնորդութիւնը ժողովուրդ բառը անորոշ է. որով 20 հոգին էլ ժողովուրդ է, 1000-ու էլ ժողովուրդ է. միջնորդութիւնը բնշի համար է լինելու, պարզ չէ. արդեօք պարզ վարձատրութիւն է լինելու, արժանիքի զնահատում. թէ մի վարչական պաշտօն ստանալու համար. Ըստ հնաւանդ կանոնի թեսը համայնքը, միջնորդում է իւր վարիչին տալ եպիսկոպոսական աստիճան. ուրիշ ոչ մի բանի համար. իսկ կաթուղիկոսն իրաւատէր է եկեղեցու այլ կարիքների համար՝ նուիրակ, դրան. իւր առանձին յանձնարարութեան պաշտօնեաներին, լուսարարապետին, ժամօրհնողին եպիսկոպոս ձեռնադրել. ուրեմն բացի ժողովրդի միջնորդութիւնը կայ և այլ դրութիւն: Կանոնը և անորոշ է և թերի:

§ 47-ը անորոշ է, արդեօք դիւան տսելով արխիք է հասկանում, թէ ՚իիւանական խորհուրդ. եթէ խորհուրդ է, ապա ինչ կարեք կայ առանձնապէս շեշտում է ՚իիւանադարի պաշտօները, պարզ չէ և այն, թէ ինչ կազմ է ունենալու ՚իիւանը և խորհուրդը. ընտրութեամբ, թէ նշանակովի հն լինելու այդ պաշտօնեաները, նոյնքան անհասկանավի է § 47-ի ծանօթ. Հայրապետական կարգադրութիւնների կոնդակով լինելու պահանջ, աւելորդ է: Այս կէտը ի հարկէ հրահանգի նիւթ է և ոչ կանոն. բայց և այսպիսի դուռ տեխնիքական խնդրում մտքի պարզութիւն չունի կաղմողը,

Հակիրճութիւն պահելը կանոններում անհրաժեշտ է. մինչ կաթուղիկոսի Գերագոյն խորհրդի նախագահ լինելը կրկնուած է երեք տարբեր որոշումներով սես § § 31, 43 և 51. կանոնադրութեան մէջ այսպիսի տարբերութիւններ մտցնելը միանգամայն անհասկանալի է:

Անորոշ է և § 55 կէտը⁹ խորհուրդը ընտրովի և նշանակովի անդամներից է. մի կողմից Գերագոյն խորհրդի անդամների ընտրում է Գեր. ժողովը, «միւս կողմից Գեր. խորհրդին մասնակցում են կաթուղիկոսի նշանակած առաջնորդները. դուրս եկաւ ընտրական սկզբունքի հակառակ բան: Բացի այդ, քանի որ Գեր. խորհրդի անդամների կէտը հոգեորական են բնական է, որ առաջնորդներ նշանակելով, որոց թիւն էլ յայտնի չէ ինչքան կարող է լինել. (ըստ կանոնի, որքան ուղենայ). որ դերակշռութիւնը կարող է նշանակովի անդամների կողմն անցնել (հոգեորականները մեծամասնութիւն կստանան) և խողիրը կանցկացնեն: Այն էլ պարզ չէ, թէ ձայնի իրաւունքով են մասնակցելու խորհրդում, թէ խորհրդադառ են լինելու. դարձեալ մի օրինակ և սկզբունքների թերութեան և բիւրօկրատիկ ողու և անորոշութեան:

Հակասութիւն է § 54 ա. և § 25 ը. միևնոյն բանը անում են երկու մարմին. ոչ է վերջնական իրաւատէրը յայտնի չէ. ինչ կնշանակէ շտապել հրապարակ հանել անսխանմ գրուածք. բնականարար նման տարօրինակութիւններ կլինեն մէջը:

Պարզ հակասութիւն է § 70. իր. կէտը և § 44-ի ը. և դ. կէտերը. կամ Կաթուղիկոսն է իրաւատէր մեկնելու, բացատրելու անորոշ կէտերը կամ կրօնական խորհուրդը. բայց կազմողի Երկուսն էլ իրաւատէր են. Նոյնպէս հակասութիւն է § 70-ի ժի. կէտը § 84-ի գ. կէտին. Նոյնպէս անուշադրութիւն և հակասութիւն է § 84-ի դ. կէտը § 35-ի դ. կէտին.

Կան և այլ լեզուական անհարթութիւններ, որոնք կանոնադրութեան մէջ տեղ չպիտի գտնէին որովհետեւ ոտ լրագրի յօդուածու պատմուածք չէ, այլ մի աշխատանք ուր ամեն բառը շափած, ձևած, իւր տեղը պիտի ունենար: Այսպէս անորոշ ևն խմբագրած, § 42-ը. ինչ է նշանակում մինչև այժմ սովորական տեղերում. արդեօք աշխարհագրական տեղի մասին է խօսքը, թէ ժամակարգութեան. § 44. ինչ կնշանակէ, շրջանին են պատկանում. սրանից կարելի է եզրակացնել, որ այդ շրջանը մեծ է և այդտեղ մտնում են նաև այլ բաներ, թէև կազմողի միտք է եղել ասել. իրաւատութեան ենթակայ են. Նոյնպէս § 44 դ. կէտը. ինչ կնշանակէ «ըստ միջնորդութեան, ինչ պարզե, պարզ չէ. եթէ կազմողը § 54-ի ը. դ. 36-ի դ. կէտի ա. ը. ծանօթութիւնները դընում է և նման մանրամասնութիւններով լցնում կանոնադրութիւնը ապա նա պարտաւոր էր և այս անորոշ կէտերը պարզաբանելը, տեսակները, պատիժները, սրանց չափերը որոշել չի կարելի մի խնդիր մանրամասնութիւններով ծանրաբեռնել, իսկ մի այլ կարեոր հարց կիսատ պոտո թողնել»:

Լեզուական անհարթութիւններ.

§ 70 «... Նորա գործունէութեան սահմանում են».

Ժա. կէտը կուսակրօն և ամուսնացեալ հազեոր կոչումն ընդունելու որոշումն է անում, առաջին դէպրում կաթուղիկոսի մասու — ի՞նչ կնշանակէ «գործունէութեան սահմանումն են և ըկոչումն անելու որոշումն է անում». ոլէտք է ասել կոչումն անելու որոշումը. միջնորդութիւն անել մէկի մօտ ձեր ուստարանութիւնն է. § 75 «... զրադման առարկաներն են».

Ա. կէտ. «Ռւսուցիչների, ուսուցչուհների և սոհասարակ դպրոցում ծառայողների նիւթական ապահովութեան մասին» պէտք է լինի «նիւթական ապահովութեան խնդիրը»:

Ծ. կէտ. «Քննում և վախճանական լուծումն է տալիս զրպոցական պաշտօնեաների մէջ վէճերին և թիւրիմացութիւններին»:

պէտք է լինի «... պաշտօնեաների մէջ ծաղած վէճերի և թիւրի-
մացութիւնների քննութիւն» և վախճանական լուծումն»:
§ 80 «... զործունէութեան շրջանին են վերաբերում».

թ. կէտ «... Վախճանական վճիռ է կայացնում ընտրութիւն-
ների դէմ զանգատաւորների մասին» պէտք է լինի «ընտրութիւն-
ների դէմ եղած զանգատաների մասին վախճանական վճիռ կայաց-
նելը»:

§ 96. «... Խրաւասութեան են պատկանում.

ա. «Ընդհանուր վերտհսկողութիւն ծխական, վիճակային
թեմական և կենդրոնական ամենատեսակ մուտքի և ծախքի կա-
նոնադրութեան վրայ» պէտք է լինի «ծխական, վիճակային թե-
մական և կենդրոնական ամենատեսակ մուտքի և ծախքի կանո-
նադրութեան ընդհանուր վերտհսկողութիւնը» և այլն.

Կարծում եմ բերածս օրինակները հաստատում են վերն
արածս ընդհանուր նկատողութիւնները և ցոյց են տալիս, որ ա-
ռանց համապատասխան պատրաստութեան, պատասխանատո-
թեան խորը զգացման նման աշխատանքով հրապարակ դալ-
աններելի է, եթէ ոչ առելին:

Դիւս վարդապետ

ԱՐՈՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՎԱՐԱՆՈՒՄՆԵՐ

Յովի. Կոստանիանի. նշատառակուրիւն
Դ. Կոստանիանի, Բազու տպարան «ՃՐՈՒԴ»,
գինը 1 ռ. 50 կ.

Քնարերգուին հասկանալու, նրա յարուցած խոհերն ու զգա-
ցումները պարզելու, ստեղծագործող հոգին ու նրա թափը պատ-
կերացնելու լաւագոյն ձանապարհն այն է, որով ինքն է զնացել
իր ստեղծագործութիւնը կատարելիս Աւրիշ ձանապարհներ որո-
նելը եթէ ոչ անմտութիւն, զոնէ ապարդիւն է, քանի որ ուրիշ
ձանապարհները մեզ երբէք հասցնել չեն կարող բանաստեղծի հո-
գու զարբաներին, այն ինչ մեզ հենց այդ վերջիններն են հար-
կաւոր. այդ միշտ քրաց» և միշտ պիտկ» զարբաների ճեղքերից
է, որ պիտի նայենք բանաստեղծի հրղեհւող ու ալեկոծւող հոգե-
կան աշխարհի «Որոնութերին ու վարանութերին» և «Արանցով
որոնենք ու վարանենք»:

Իր ոտանաւորների ստուար ժողովածուն Կոստանիանը բա-
ժանել է վեց մասի՝ 1. Ներշնչումի խոհեր, 2. Կեանք և խոկանք,